Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, 2023, № 3 (59), БАРЕГОРЦ

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ԲԱՐԻ ԳՈՐԾ ԱՆՈՂԻ ՀԵՏ՝ ԱՂԵՏԻՑ ԱՌԱՋ

Մեր հիմնադրամի նվիրյալ բարեկամ, բժիշկ ***Վաղարշակ Փիլոսյանին*** *Գուրգեն Մելիքյանի հետ Երևանում հանդիպեցինք Արցախի բլոկադայի օրերին՝ սեպտեմբերի 19-ին, ադրբեջանական զինուժի՝ խաղաղ արցախահայության վրա անակնկալ լայնածավալ հարձակումից ու 120 000 հայերի՝ մահվան սպառնալիքով բռնի տեղահանությամբ հայաթափման ցեղասպանական աղետից շուրջ մեկ ամիս առաջ՝ օգոստոսի 17-ին: Այն ժամանակ դոկտոր Փիլոսյանը լավատես էր ու հավատում էր աշխարհի առաջադեմ ուժերի մարդասիրական առաքելության և արդարության հաղթանակին: Հիմա էլ հուսադրված է, որ աշխարհում օրենքներ կան, և այդ օրենքները գործադրելու համար ավելի քան բավարար ուժեր կան, որոնք պետք է համագործակցեն համախոհական մոտեցումով: Նա հիացած է ազգին ծանոթ կամ անծանոթ հայերով ու ոչ հայերով, որոնք «Հայկական հարցը» լուռ ու մունջ առաջ են տանում միջազգային իրավաբանության դաշտում՝ «ՀԱՅ ԴԱՏԻ ՁԻՆՎՈՐ» կոչվելով, ինքնակամ, Հայաստանի իշխանությունների 33 տարվա անկախացած անտարբերության և խորհրդային 70 տարիների հանցավոր ու հանցածին լռությանը չնայելով: Իրականում չլուծված «Հայկական հարցը», որ այսօրվա Մերձավոր ու Միջին Արևելքի ճգնաժամերի հիմնապատճառներից է, պետական մոտեցմամբ՝ անտեր է մնացել:*

Սակայն բնածին անուղղելի լավատեսներս թեև ներքուստ մի վատ բանի սպասում էինք մեր ոխերիմ հարևաններից ու դաշնակիցներից, վերջնականապես հուսահատված չէինք. դեռ քննարկում էինք շրջափակումը վերացնելու և արցախահայությանը սովամահությունից փրկելու միջոցներ գտնելու հարցերը:

Չենք կարող ասել, թե բժշկի՝ մեր հայրենիքի ու ժողովրդի ճակատագրով մտահոգ հայի հետ հնարավոր նոր հանդիպումն ու հարցազրույցը ի՛նչ բովանդակություն կունենան, բայց արդեն կայացած սույն հարցազրույցը սիրով ներկայացնում ենք «Բարեգործի» ընթերցողին:

ԹՂԹԱԿԻՑ –Ողջո՛ւյն հարգելի դոկտոր Փիլոսյան: Այսօր Դուք հայտնի եք որպես բազմակողմ հետաքրքրությունների տեր անձ: Բնակվում եք Ամերիկայում, ապրում եք Հայաստանով: Բարի գործեր եք անում, մեր հիմնադրամի հնագույն նվիրյալներից եք, նրա բարեգործական ծրագրերն իրագործողներից մեկը, բայց չեք սիրում խոսել դրա մասին: Սակայն որքան էլ զուսպ եք ու Ձեր արածների մասին համեստաբար լռող՝ համացանցում զետեղված «Նոյյան տապան»-ի հարցազրույցները, միևնույն է, շատ բան են բացահայտում Ձեր ազնիվ տեսակի, Ձեր վառ նկարագրի և անհատականության, Հայաստանի, Արցախի և աշխարհասփյուռ հայության ապագայի վերաբերյալ անհանգստությունների մասին: Դրանցով է ձևավորված Ձեր ամեն խոսքը՝ և՛ «հանուն օրինականութեան, արդարութեան, խաղաղութեան և հայ ժողովրդի ապագայի» ԱՄՆ-ի գործող նախագահ Ջոզեֆ Բայդենին, և՛ Ռուսաստանի նախագահ Վլ. Պուտինին հասցեագրված նամակները՝ հայության ճակատագրի, ամերիկյան մեծ կնիքով վավերացված՝ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի և նրանով անժամկետ հաստատված Հայաստանի սահմանների՝ այսօրվա պահանջատիրոջ իրավունքով Ձեր հիշեցումներով հեռուստաելույթները և Ձեր հայանպաստ գործունեությունն առհասարակ: Հաճախ եք Ձեր տիկնոջ՝ Սիլվայի, ու զավակների հետ լինում Հայաստանում՝ մի լավ առիթով կամ մի լավ բան անելու համար: Հայ հանրությանը հայտնի է, որ նախորդ անգամ էլ Հայաստան էիք եկել՝ ուղեկցելով ամերիկյան բանակի չորս պաշտոնաթող գեներալների, որոնք, ուսումնասիրելով հայ – ադրբեջանական սահմանին տիրող լարված իրավիճակը, այդ

մասին պիտի զեկուցեին ուր որ հարկն է: Ձեր հարցազրույցներից մեկում կարծեմ Դուք եք ասել. «Աստված օգնում է նրան, ով ոգեղեն է»: Ձեր համոզմամբ՝ ոգեղեն են նաև հայությունը, նրա ստեղծագործությունն ու հայրենիք Հայաստանը: Եթե գաղտնիք չէ, ո՞րն է այս անգամ Ձեր Հայաստան այցի նպատակը:

ՎԱՂԱՐՇԱԿ ՓԻԼՈՍՅԱՆ – Այո՛, ինքս եմ ասել՝ Հայաստանը ոգեղեն է, իսկ «Հայկական հարցը» հոգեշեն է: «Հայկական հարցը» ուրիշ որակի ներդաշնակություն է ստեղծում: «Հայկական հարցը» աշխարհը և անձը արատներից մաքրելու լիցքեր ունի իր մեջ: «Հայկական հարցը» մարդկությանը իր իսկ առողջ արմատներին տանող ոգեղեն երևույթ է: Չկա

Դոկտոր Փիլոսյանը Նոյյան Տապանի հյուր

աշխարհում մի այլ ազգ, որ այսքան տառապանք տանելով, այսքան անավարտ գործեր ունենալով, նույնիսկ 33 տարվա շրջափակումով հանդերձ՝ տնտեսական աճ արձանագրի՝ 103 տարի առաջ Ազգերի լիգայի ամենամեծ գթությանն արժանանալով և 102 տարի առաջվա մոլորությունների մթնոլորտում գործելով հանդերձ:

Ձախից՝ դոկտոր Փիլոսյանն իր տիկնոջ՝ տ.Սիլվայի, Հակոբ Քիրեջյանի և հիմնադրամի վարչության անդամների պրոֆ. Ա. Ավագյանի, պրոֆ. Գ. Մելիքյանի, պրոֆ. Ս. Մուրադյանի հետ

Հայաստան գալը այդ ամենահարազատ իրականության հետ հպվելու հնարավորությունն է, որը քայլերդ և կյանքդ վերլուծելու հնարավորություն է տալիս: Մասիս, Նեմրութ սար, Միհրի դուռ, Անի, Աղթամար...Խոր Վիրապ, Էջմիածին, Խութավանք, Գանձասար...Գառնի...Մատենադարան....Մաշտոց... Նարեկ... Ո՞ր մեկն ասեմ: Ոգեղեն են: Մտահայեցողության տեսակետից, իրոք, ամեն ազգ ունի ներկայանալիք արժանիքներ: Հայկականը եզակիներից է: Մեր պապերն են ստեղծել:

Շուրջ 700 – 800 տարի ահավոր անորոշություն է եղել: Այսօրվա ուժերը հզորություններ դարձնելու, համախմբելու և վերահամախմբելու ոգեղեն պահանջն ուժեղ է: Այցերս անձնական մակարդակի վրա աճ արձանագրելու հնարավորություններ են տալիս: Գոհ եմ: Երանելի է: Անձը՝ անհատապես, և ազգը՝ որպես հավաքականություն՝ իրենց մարդկային և ազգային արմատների հետ կապվելու պահանջ և անհրաժեշտություն ունեն: Անցումային շրջաններում անձը և ազգը կա՛մ աճ են արձանագրում՝ մարտահրավերներին հաջող պատասխանելով, կա՛մ կործանվում են նարգիզական, հիսթերիկ, ծայրագույն նյութապաշտական և ընդհանրապես անձի բոլոր էգոիստիկ դրսևորումներով: Ոգեղեն ազգը երկար չի կարող մնալ բարդույթավոր ղեկավարների մշուշոտ տեսլականների մթնոլորտում: Ամեն Հայ իր ազգի դեսպանն է, եթե սփյուռքում է: Ամեն Հայ ազգաշեն է, եթե Հայաստանում է: Ամեն մի հիվանդ, սոված, փախստական հայ նույնպես իմ քույրն ու եղբայրն է: Ունեցածը կիսելը բարություն է: Ցավոք, քաղքենիությունը մոլախոտի նման համառում է: Սա նյութապաշտությունից է: Սրա դեմ անձն ինքը պիտի պայքարի: Իսկապես կյանքը կարճ է: Հոգիդ խաղաղ պահելու քայլեր պիտի անես: Հետաքրքիր է, որ հին գրքերում դեպրեսիան համարվում է անշնորհակալ մարդու հոգեվիճակ:

Բարեգործությունը հակադեպրեսանտ է:

Դուստրս՝ Անի Փիլոսյանը, ինչպես գիտեք, վաղուց է զինվորագրված հայոց գործին: Լիլիթ Փիլոսյանը նույնպես սկսեց աշխատել: Ինքն էլ է գիտակցել ազգային պարտքի դերը:

Մյուս դուստրերս՝ Աստղիկ և Սոնա Փիլոսյանները, նույնպես իրենց շուտով ցույց կտան՝ նվիրատվության իրենց լուման բերելով:

Հոգին առողջանում է ստեղծելով և ստեղծածը կիսելու ունակությամբ: Անելիքներ շատ կան: Ոգեղենության ճամփան մարդեղության է տանում: Այստեղ գործադրողը ծնող-զավակ կապը չէ, այլ իր հոգին խաղաղեցնելու իր ձևը գտնող անձը:

ԹՂԹԱԿԻՑ – Պրն. Փիլոսյան, շնորհակալություն հաճելի հանդիպման և բովանդակալից հարցազրույցի համար: Ձեզ ընդամենը մեկ բազմաճյուղ հարց տրվեց, բայց Դուք կռահելով պատասխանեցիք նաև այն հարցերին, որ հետո պիտի Ձեզ տրվեին: Այդ պատճառով էլ նոր հարցեր կառաջադրվեն հնարավոր հաջորդ ուրախառիթ հանդիպումներին:

ՄԵԾԱՆՈՒՆ ԲԺԻՇԿ ՎԱՐԴԳԵՍ ՆԱՋԱՐՅԱՆԸ՝ ԵՌԱԲԼՈՒՐ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ

Ասում են՝ մահվան առաջ հավասար են բոլորը. եթե նույնիսկ ճիշտ է դա, ապա շատ է անարդար: Իսկ արդար լինելու դեպքում ամենազոր մահը հանգուցյալներին պիտի դասակարգեր ըստ երկրային կյանքում ունեցած վաստակի ու գործունեության, ըստ մարդկությանը և հայրենիքին մատուցած ծառայությունների, ըստ խղճի և բարեսրտության և ամենից մարդկայիններին ու արժանավորներին ցուցաբերեր առանձնակի վերաբերմունք. երբեք չդառնացներ նրանց, ու քանի դեռ պիտանի էին մարդկությանը, երկարեր նրանց երջանիկ օրերը գոնե այնքան, որ մինչև իրենք այլևս չուզենային ապրել երկրային կյանքով:

Հզոր ու անողոք մահը, ցավոք, բարեգութ չէ. այլապես չէինք ունենա վաղամեռիկ հանճարների փաղանգն ու դեռևս կյանքը չվայելած թանկ հարազատների, 18 – 20 տարեկանների անդարձ կորուստներ, և ականավոր բժիշկ, վնասվածքաբան–օրթոպեդ, միևնույն ժամանակ՝ բարերար, մեր հիմնադրամի հնագույն ու լավ բարեկամ Վարդգես Նաջարյանը 2023 թ. ապրիլի 15-ին չէր հեռանա մեզանից՝ թեկուզ 93 տարեկանում պատճառելով կսկիծ ու ափսոսանք՝ նաև հարուցելով արժանապատիվ հպարտության զգացում:

Որ երկրում էլ ծնված լինի՝ հայ մարդն ունի հային բնորոշ յուրօրինակ ազգային նկարագիր ու բնավորություն: Արտաքին նշաններն ու տվյալները՝ անուն, ազգանուն, հագուկապ, հաճախ էական դեր չեն ունենում. ցավոք, հայի անուն - ազգանվամբ երկոտանիներ էլ են հայտնվում՝ ազգի ու հայրենիքի, մայրենի լեզվի ու մշակույթի հետ հեռավոր կապ անգամ չունեցող, բայց նրանց անունից ճամարտակող: Հայրենիքում հենց նրանցից են սերում հիշողության ոչ արժանի օտարամոլ 5-րդ շարասյան կազմը և օտար իշխանությունների շահերը սպասարկող մեր «ազգակիցները»:

Բայց ուրիշ ծնունդ և հայի ուրիշ տեսակ էր Վարդգես Նաջարյանը: Բովանդակալից է եղել 1930 թ. ապրիլի 4-ին Քեսաբում ծնված այս հայորդու կյանքի ուղին: 1957 թ. ավարտելով Բեյրութի Ամերիկյան համալսարանը և բժշկական բարձրագույն դպրոցը՝ այնուհետև սովորել և ավարտել է Չիկագոյի Հյուսիսարևմտյան համալսարանը: Իր ձեռք բերած խոր ու համակողմանի գիտելիքները, մասնագիտական հմտությունները նա կիրառել է բժշկագիտության ասպարեզում, բայց իր քաղաքացիական կեցվածքով, հայ մարդու ազգային հակումներով նա միշտ եղել է Հայաստանի հետ ու հայության կողքին խորհրդային ժամանակներից ի վեր:

Վարդգես և Մերի Նաջարյանների յուրաքանչյուր այցելությունը հայրենիք՝ Հայաստան կամ Արցախ, եղել է հայրենանվեր առաքելություն: Օդանավակայանում մի ճեպազրույցի ժամանակ երբ նրան հարցրել են՝ ո՛րն է հերթական այցելության նպատակը և ի՞նչ ծրագրեր ունեն Նաջարյանները, չափածո է պատասխանել հուզված բժշկապետը: Պետք չէ գեղարվեստական լուրջ արժեք փնտրել նրա անկեղծ, զեղումնալից սրտի խոսքում.

Երբ քեզանից հեռու եմ ես,
Ինձ թվում է, թե որբ եմ ես,
Թվում է, թե լեռներն Հայոց
Բանտարկված են Մասիսի պես:
Երբ քեզանից հեռու եմ ես,
Թափառում եմ անտունի պես,
Ալեկոծված ծովի նման
Խառնվում եմ ու փոթորկվում:
Երբ քեզանից հեռու եմ ես,
Ինձ ավելի ես մոտենում,
Եվ չբուժվող վերքի նման
Ցավս կրկին խորն է դառնում:
Երբ քեզանից հեռու եմ ես,
Ո՞վ հայրենիք, էլ ո՞վ եմ ես…

Ամերիկյան իրականության մեջ նա վարել է իր կոչմանը համապատասխան բազմաթիվ պաշտոններ: Եղել է Քլիվլենդի (Օհայոյի նահանգ) «Մետրոպոլ» և Գլենդելի «Մեմորիալ» հիվանդանոցների գլխավոր օրթոպեդ, բազմաթիվ բժշկական ընկերակցությունների անդամ և այս ծանրաբեռնվածու-

թյան պայմաններում Գլենդելի հեռուստատեսությամբ կազմակերպել ու վարել է «Առողջապահության պահ» հայկական հաղորդաշարը:

Օտար ափերում պանդուխտ հայի կարգավիճակով մշտապես ապրած, ամենամարդասիրական մասնագիտության՝ բժշկի և բժշկագիտության բարձունքները և մեծ հեղինակություն նվաճած այդ հզոր անհատականությունը միշտ է եղել Հայաստան հայրենիքի հետ ու հայության կողքին, մանավանդ դժվար օրերին: Իսկ դժվար ու դժվարագույն օրեր, ցավոք, շատ են եղել հայության համար մանավանդ վերջին տասնամյակներում:

Ձախից աջ՝ Հակոբ Բաշմակյան, Վահե Ղազանչյան, Վարդգես Նաջարյան, Գուրգեն Մելիքյան, Մերի Նաջարյան, արցախցի բանաստեղծ Գեղամ Աղաջանյանի հետ

Գաղտնիք չէ, որ Սպիտակի երկրաշարժի օրերին Հայաստան բերած մեծաքանակ բուժսարքավորումներից ու դեղորայքից բացի՝ բազմաթիվ վիրավոր երեխաների է Վարդգես Նաջարյանն իր միջոցներով տեղափոխել ԱՄՆ ու կազմակերպել նրանց անհատույց բուժումն ու պրոթեզավորումը, իսկ արցախյան առաջին պատերազմի օրերին նա իր տիկնոջ՝ բժշկուհի Մերի Նաջարյանի հետ միասին արել են գրեթե անկարելին. վտանգի ենթարկելով իրենց կյանքը՝ հենց մարտադաշտում՝ խրամատներում ու վրաններում, շարժական հոսպտալներում փրկել են բազում վիրավոր հայ զինվորների: Արցախի ՊԲ հրամանատարի տեղակալ արտաքին կապերի գծով պրոֆ. Գ. Մելիքյանը վկան ու ականատեսն է, թե ինչպես հայ բժշկապետը թշնամու կողմից ռմբակոծվող Արցախ էր բերել աշխարհահռչակ ամերիկացի բժիշկ Ռոբերտ Գեյլին՝ վիրահատություններ կատարելու:

Հայաստանում և Արցախում մեծ ու փոքր գիտակցել են Նաջարյանների հայրենանվեր գործունեության արժեքը: Պատանի բանաստեղծ Գեղամ Աղաջանյանը դեռ 1993 թ. «Տեր և Տիկին Նաջարյաններին» ձոներգում երախտագիտության խոր զգացումով գրել է.

Ձերն է ամեն ինչ, ձերն են գետ ու լեռ,
Ձերն են երգ ու վիշտ և հաղթական տենչ,
Չ՞է որ հենց վշտի, մորմոքի պահին
Թիկունքը դարձաք իմ մայր Արցախի:

Հայությանն ու հայոց պետականությանը մատուցած անգնահատելի ծառայություններով Վարդգես Նաջարյանը նվաճել էր «Եռաբլուր» զինվորական պանթեոնում հերոսների կողքին հավիտենապես հանգչելու և նրանց հետ հավերժանալու բացառիկ պատիվը:

Պանթեոնը բազմամարդ էր հունիսի 29-ին. ԱՄՆ-ից և այլ երկրներից ժամանած հարազատներ, գործընկերներ, ծանոթներ ու անծանոթներ, հազարավոր երևանցիներ, ներկա ու նախկին պաշտոնատար անձինք եկել էին մասնակցելու Վարդգես Նաջարյանի աճյունասափորը հայրենի հողին հանձնելու արարողությանը և հարգանքի տուրք մատուցելու մեծ հայի անմահ հիշատակին:

Համաժողովրդական այդ սերը նա ձեռք էր բերել ազգին ու հայրենիքին անհաշվելի անձնվեր ծառայություններով: Վարդգես Նաջարյանն էր հիմնել և կահավորել Ստեփանակերտի հոսպիտալի վերակենդանացման բաժանմունքը, որը կոչվում էր նրա և տիկնոջ անունով, ինչպես նաև ՊՆ կենտրոնական զինվորական կլինիկական հոսպիտալում ստեղծել վնասվածքաբանության և օրթոպեդիայի մասնագիտացված վիրաբուժական բաժանմունքը: Երևանում Տեր և Տիկին Նաջարյան ամուսիններն են ստեղծել առաջին «արթրոսկոպիկ վիրաբուժության համակարգը»:

«Եռաբլուր» պանթեոնում սգո արարողության և հոգեհացի սեղանի շուրջ ելույթներում հիշվեցին համանման բազում օրինակներ, հիշատակի հավերժացման ու երախտագիտության հուզումնալից խոսքեր, որոնցով արժևորվում էին բացառիկ հայն ու նրա ազգանվեր գործունեությունը, որը գնահատվել էր ՀՀ բանակի գնդապետի կոչումով (1996), «Էլլիս Այլընդ» պատվո մեդալով (2014), «Դրաստամատ Կանայան» (2015) մեդալով և այլն:

Օրինավոր հայի, բացառիկ մասնագետի և նվիրյալ հայորդու հետ միասին հիշվեց ու ըստ արժանվույն մեծարվեց նաև բարեգործ Վարդգես Նաջարյանը, որը Հայաստանին և Արցախին անհրաժեշտ բուժօգնություն, դեղորայք և բուժարքավորումներ անհատույց տրամադրելուց բացի՝ մեր հիմնադրամի միջոցով օգնում էր Արցախի կարիքավոր բազմազավակ ընտանիքներին, անվճարունակ ուսանողներին և հիմնադրամի մյուս բարեգործական ծրագրերին: Դա հաստատվում էր նաև արարողության մասնակիցների՝ հիմնադրամի գործադիր տնօրեն պրոֆ. Գուրգեն Մելիքյանի, հոգաբարձության խորհրդի նախագահ պրոֆ. Արծրուն Ավագյանի և խորհրդի անդամ ու «Բարեգործ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր պրոֆ. Սամվել Մուրադյանի տպավորիչ ելույթներով:

2023 Թ. ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

	Ամսաթիվ	Անուն, Ազգանուն	Վճարման նպատակ	Գումար	Համարժեք
1	1/11/2023	Ռաֆֆի Պալյան	Օգնություն, Խորեն Պալյան, Լուսինե Զաքարյան կրթաթոշակ	197000	500 USD
2	1/11/2023	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	Օգնություն	1000000	
3	1/12/2023	Մարտին Զարեհ	Օգնություն	39500	100 USD
4	1/16/2023	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
5	2/3/2023	Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ	Օգնություն	400000	
6	2/13/2023	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
7	2/17/2023	Մելիքյան Գուրգեն	Սիրելի Սիմա մայրիկի (Ազարյանի) հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20000	
8	2/17/2023	Մելիքյան Գուրգեն	Ամբեր Սրափյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20000	
9	2/17/2023	Սրափյան Վարուժան	Ամբեր Սրափյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	39000	100 USD
10	2/17/2023	Մարտիրոսյաններ Ջերալդ և Շաքե	Ամբեր Սրափյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	78000	200 USD
11	2/17/2023	Քահվե Թոնի	Ամբեր Սրափյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	200000	
12	2/17/2023	Քահվե Թոնի	Սիրելի Սիմա Ազարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	200000	
13	2/17/2023	Նազարյան Բագրատ	Օգնություն	390000	1000 USD
14	3/14/2023	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
15	4/10/2023	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
16	4/10/2023	Ազատյան Գրիգոր /Քյոլն/	Օգնություն	41700	100 EUR
17	4/20/2023	Արաշ Սադեղզադե	ԽԵԱ ծրագիր	250000	
18	4/21/2023	Armenis cher renterehmur-vere in E.V Koeln	Օգնություն	212 440	500 EUR

19	4/25/2023	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ հայրենիքի նվիրյալ զինվոր, անվանի բժշկապետ Վարդ-գես Նաջարյանի հիշատա-կին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000	
20	4/25/2023	Քուշերյան Կատյա	Օգնություն	115 050	300 USD
21	4/25/2023	Մելիքյան Գուրգեն	ԽԵԱ ծառերի և գրքերի ծրագիր	2 435 000	
22	5/12/2023	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
23	6/5/2023	Կոջայան Մինաս	Օգնություն	19 225	50 USD
24	6/8/2023	Քուշերյան Կատյա	Օգնություն	95 000	
25	6/12/2023	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
26	6/12/2023	Anonymous V.K.	Օգնություն	7 728 000	20000 USD
27	6/27/2023	«Թեքեյան կենտրոն» հիմնադրամ	Նվիրատվություն	574 500	
28	7/6/2023	Չուգասզյան Լևոն	Օգնություն	20000	
29	7/18/2023	Nick Agulian	Օգնություն «Արփեն» մոր և մանկան կենտրոնին	191750	500 USD
30	7/24/2023	Մելիքյան Գուրգեն	Մեծ հայագետ-պատմաբան, հայրենիքի զինվոր Ռիչարդ Հովհաննիսյանի հիշատա-կին՝ ի փոխան ծաղկեպսա-կի. 22.07.2023	20 000	
31	8/1/2023	«Թեքեյան կենտրոն» հիմնադրամ	Նվիրատվություն Բագրատ Նազարյանից	1 532 000	
32	8/10/2023	Սեփանյան Սուրեն	Օգնություն	200 000	
33	8/17/2023	Մարտին Զարեհ	Օգնություն	30 000	
34	8/24/2023	Փիրջանյան Վահրամ	Նվիրատվություն Փիրջանյան Վահրամից	150 000	
35	9/8/2023	Մելիքյան Գուրգեն	Ծառերի ծ/ր. սիրելի տիկ. Հասմիկ Փիրջանյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի 08.09.2023	20 000	
36	9/22/2023	Թադևոսյաններ Նոնա և Ռոմելա	Ուսման ծրագիր	78 000	200 USD
37	9/27/2023	Մելիքյան Գուրգեն	Հիմնադրամի աննկուն բարեկամ, անչափ սիրելի Հարմիկ Տեր-Ավանեսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի: 27.09.2023	20000	
38	9/28/2023	Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի	Ուսման ծրագիր	100 000	
39	10/3/2023	«Ալֆա Ֆուդ Սերվիս» ՍՊԸ	Արցախից բռնագաղթած երեխաների ուսման վարձի վճար	400 000	
40	10/16/2023	Մելիքյան Գուրգեն	Օգնություն	54 000	
41	10/16/2023	Արաշ Սադեղզադե	Student Program-Arash Sadeghzade	79 400	
42	10/16/2023	Anonymous L. M.	Օգնություն	397 000	
43	10/18/2023	Մելիքյան Գուրգեն	Օգնություն	511 000	
44	10/18/2023	Anonymous V. K.	Օգնություն	8 032 600	
45	10/19/2023	Քահվե Սաիթ	Օգնություն Արցախի հայրենակիցներին	650 000	

46	10/24/2023	Շահնազարյաններ Հենրիկ, Նարե և Նիկոլ	Օգնություն	100 000	
47	11/9/2023	Մելիքյան Գուրգեն	Ծառերի ծրագիր. Իր արմատներին հարազատ մեծ հայրենասեր Վարդան Ֆունդուկյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000	
48	11/10/2023	«Երևանի գարեջուր», ՓԲԸ	Օգնություն	1 000 000	
49	11/21/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն	300 000	
			Ընդամենը՝	**28 040 165**	

ԵՊՀ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԱՆՀԱՏ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Ամսաթիվ	**Նվիրատուներ**	**Նպատակը**	**Գումար**
1	6/5/2023	ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ	Օգնություն	243 000
2	7/6/2023	ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն	Օգնություն	50 000
3	7/7/2023	Սումբատյան Անուշ Անդրանիկի	Օգնություն	5000
4	7/7/2023	Աբաջյան Ռոզա Անդրանիկի	Օգնություն	5000
5	7/7/2023	Քոչարյան Սերգեյ Սևանի	Օգնություն	5000
6	7/7/2023	Դանիելյան Գևորգ Բալաբեկի	Օգնություն	20000
7	7/10/2023	Խեդրակյան Արտյոմ	Օգնություն	5000
8	7/10/2023	Ալեքսանյան Ալվարդ	Օգնություն	10000
9	7/10/2023	«ԻԴՐԱՄ» ՍՊԸ	Օգնություն	10000
10	7/10/2023	Կարապետյան Վարսեր Սամվելի	Օգնություն	10000
11	7/11/2023	Ջիլավյան Հրանտ	Օգնություն	5000
12	7/11/2023	Ասատրյան Արմեն	Օգնություն	10000
13	7/11/2023	Դանիելյան Անի	Օգնություն	10000
14	7/11/2023	Ղուկասյան Դավիթ Սամվելի	Օգնություն	10000
15	7/11/2023	Կիրակոսյան Սվետլանա Սերժիկի	Օգնություն	10000
16	7/11/2023	Օհանյան Վիկտորյա	Օգնություն	20000
17	7/11/2023	Վաղարշյան Արթուր Գրիշայի	Օգնություն	50000
18	7/12/2023	Ենգիբարյան Վահե Գուրգենի	Օգնություն	5000
19	7/12/2023	Ամիրյան Կարեն	Օգնություն	10000
20	7/13/2023	Դավթյան Նարինե	Օգնություն	10000
21	7/18/2023	ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ	Օգնություն	225000
22	7/18/2023	ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ	Օգնություն	1226000
23	12/18/2023	Դարբինյան Նունիկ	Օգնություն	20000
24	12/18/2023	Ամրյան Թերեզա	Օգնություն	20000
			Ընդամենը՝	**1 994 000**

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Ամսաթիվ	Ազգանուն, անուն	Բնակության վայր	Կենց. տեխնիկա	Գումար
9/28/2023	Գրիգորյան Մանուշ	Մաչկալաշեն/Խաչեն	Լվացքի մեքենա 110000	50000
10/3/2023	Հակոբյան Արտակ	Եղցահող		50000
10/3/2023	Զաքարյան Գոհար	Եղցահող		50000
10/3/2023	Մովսեսյան Գոհար	Եղցահող		50000
10/3/2023	Հովակիմյան Մանուշ	Եղցահող		50000
10/3/2023	Գասպարյան Գագիկ	Բերձոր/Ստեփանակերտ		60000
10/3/2023	Բաղդասարովա Սուսան	Եղցահող	Լվացքի մեքենա 89 000	60000
10/3/2023	Ասրյան Մարիամ	Եղցահող	Հեռուստացույց 79 000	70000
10/3/2023	Վարդանյան Արմեն	Իշխանաձոր/Իվանյան		70000
10/3/2023	Գրիգորյան Արևիկ	Հերիկ/Ճարտար		100000
10/5/2023	Գրիգորյան Էռնա	Ստեփանակերտ		50000
10/10/2023	Ազարյան Ռիտա	Եղցահող	Սառնարան 149000	
10/14/2023	Սայամյան Սոնա	Բերձոր		60000
		Ընդամենը՝	**427 000**	**720 000**

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ

Հ/հ	Ամսաթիվ	Ստացող	Նպատակ	Գումար
1	9/8/2023	ԵՊՀ հիմնադրամ	Վիրաբյան Միլենա, ԵԼՀ, անգլ-ֆրանս 1-ին	50000
2	9/8/2023	ԵՊՀ հիմնադրամ	Միրաքյան Կարեն, իրավ. 1-ին կուրս	100000
3	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Ասլանյան Հայկանուշ, ԵԼՀ, թրգմ. Գործ, 3-րդ կ.	100000
4	9/29/2023	Հայկական բժշկական ինստիտուտ	Դեմուրչյան Պարույր, ստոմ. 2-րդ կուրս	100000
5	9/29/2023	Բրյուսովի անվ. պետ. համալսարան	Մամուլյան Աստղիկ, թարգմ. գործ, հայ-անգլ 4-րդ կուրս	100000
6	9/29/2023	Բրյուսովի անվ. պետ. համալսարան	Գրիգորյան Լիլիթ, միջմշակ. հաղորդ. անգլ 1-ին կուրս	150000
7	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Շալունց Մարի, իրավ. 2-րդ կուրս	150000
8	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Առուստամյան Էլեն, ԵԼՀ, անգլ-իսպ. 1-ին կուրս	150000
9	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Արզումանյան Սոնա, ԵԼՀ, միջմշակ. հաղորդ. 1-ին կուրսի հավակնորդ	150000

10	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Թադևոսյան Էլենա, միջազգ. հարաբ. 2-րդ կուրս	150000
11	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Զաքարյան Ամալյա, բանասիր. 3-րդ կուրս	150000
12	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Բաղալյան Լիլիթ, միջազգ. հարաբ. 2-րդ կուրս	150000
13	9/29/2023	Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ	Ավետիսյան Անահիտ, օտար լեզու 4-րդ կուրս	150000
14	9/29/2023	ՀԱՊՀ	Մինասյան Մինաս, ԷԷԻ 3-րդ կուրս	150000
15	10/9/2023	ԵՊՀ հիմնադրամ	Վահրամյան Վիկտորյա, արաբ. 1-ին կուրս	150000
16	10/12/2023	ԵՊՀ հիմնադրամ	Սապրիչյան Էլիզաբետ, մեդիա և տեղեկ. իրավ, մագիստր 1-ին կուրս	100000
17	10/12/2023	Հերացու անվ. ԵՊԲՀ	Մկրտչյան Անահիտ, ընդհ. բժշկ. 2-րդ կուրս	100000
18	10/18/2023	ԵՊՀ հիմնադրամ	Գևորգյան Խաչիկ, սոց. մանկավարժ. 3-րդ կուրս	75000
19	10/18/2023	ԵՊՀ հիմնադրամ	Ահարոնյան Տաթև, կրթության կառավարում մագիստր 2-րդ կուրս	75000
20	10/18/2023	ԵՊՀ հիմնադրամ	Նահապետյան Նաիրի, միջազգ հարաբ. 2-րդ կուրս	100000
21	10/19/2023	Հայկական բժշկական ինստիտուտ	Բաբայան Տիգրան, ստոմատոլոգիա 3-րդ կուրս	150000
22	10/25/2023	Հայաստանի ֆրանս. համալսարան	Թադևոսյան Նարե, իրավ. 2-րդ կուրս	150000
			Ընդամենը՝	**2 700 000**

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

Հ/հ	Ամսաթիվ	Ստացող	Նպատակ	Գումար
1	9/29/2023	Շ. Ազնավուրի անվ. մշակ. և արվեստի պետ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Ստեփանյան Եսթեր	10000
2	9/29/2023	Ա. Բաբաջանյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Արմասյան Համլետ	10000
3	9/29/2023	Ա. Բաբաջանյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Դավիթյան Կարեն	10000
4	9/29/2023	Կոմիտասի անվ. ԵՊԿ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Մելքոնյան Վիկտորիա	10000
5	9/29/2023	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Փոդրատչյան Հայկ	10000
6	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվ. կրթ., Հայրապետյան Անգելինա, հայոց լեզու և գրակ. 4-րդ կուրս	20000
7	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթ., Վարդանյան Անահիտ, հայոց լեզու և գրակ. 3-րդ կուրս	30000

8	9/29/2023	ԵՊՀ հիմնադրամ	Դավիթ և Նազելի Չարչյանների անվ. կրթ.,Պետրոսյան Արտյոմ, քիմիա 3-րդ կուրս	30000
9	10/6/2023	Շ. Ազնավուրի անվ. մշակ. և արվեստի պետ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Ստեփանյան Եսթեր	10000
10	10/6/2023	Ա. Բաբաջանյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Արմասյան Համլետ	10000
11	10/6/2023	Ա. Բաբաջանյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Դավիթյան Կարեն	10000
12	10/6/2023	Կոմիտասի անվ. ԵՊԿ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Մելքոնյան Վիկտորիա	10000
13	10/6/2023	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Փոդրատչյան Հայկ	10000
14	10/6/2023	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվ. կրթ., Հայրապետյան Անգելինա, հայոց լեզու և գրակ. 4-րդ կուրս	20000
15	10/6/2023	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթ., Վարդանյան Անահիտ, հայոց լեզու և գրակ. 3-րդ կուրս	30000
16	10/6/2023	ԵՊՀ հիմնադրամ	Դավիթ և Նազելի Չարչյանների անվ. կրթ.,Պետրոսյան Արտյոմ, քիմիա 3-րդ կուրս	30000
17	11/7/2023	Շ. Ազնավուրի անվ. մշակ. և արվեստի պետ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Ստեփանյան Եսթեր	10000
18	11/7/2023	Ա. Բաբաջանյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Արմասյան Համլետ	10000
19	11/7/2023	Ա. Բաբաջանյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Դավիթյան Կարեն	10000
20	11/7/2023	Կոմիտասի անվ. ԵՊԿ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Մելքոնյան Վիկտորիա	10000
21	11/7/2023	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Փոդրատչյան Հայկ	10000
22	11/7/2023	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվ. կրթ., Հայրապետյան Անգելինա, հայոց լեզու և գրակ. 4-րդ կուրս	20000
23	11/7/2023	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթ., Վարդանյան Անահիտ, հայոց լեզու և գրակ. 3-րդ կուրս	30000
24	11/7/2023	ԵՊՀ հիմնադրամ	Դավիթ և Նազելի Չարչյանների անվ. կրթ.,Պետրոսյան Արտյոմ, քիմիա 3-րդ կուրս	30000
25	11/7/2023	ԵՊՀ հիմնադրամ	Դավիթ և Նազելի Չարչյանների անվ. կրթ.,Գասպարյան Աննա, ֆարմացիա մագիստր. 1-ին կուրս	90000
			Ընդամենը՝	**480000**

ՍՏԱՑԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ս Տ Ա Ց Ա Կ Ա Ն

Խորին երախտագիտությամբ հայտնում ենք, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» ստացանք 54 (հիսունչորս) միավոր գիրք, 18 անվանում գրականություն՝ յուրաքանչյուրից 3-ական օրինակ (կցված է հիմնադրամի հրատարակած 18 անուն գրքերի ցուցակը):

ԸՆԴՈՒՆԵՑ՝ (Դրված է ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի կնիքը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսոր
Գուրգեն Մելիքյանին

Մեծարգո՛ պրն. Մելիքյան,

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը, հանդիսանալով գիտական տեղեկատվության կենտրոն, իրականացնում է ինչպես ՀՀ ԳԱԱ, այնպես էլ ողջ հանրապետության գիտահետազոտական կառույցների, ինչպես նաև անհատների գիտատեղեկատվական սպասարկումը: Նոր հրատարակություններով գրադարանի հավաքածուների համալրումը առանցքային ուղղություններից մեկն է: Օրերս ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը Ձեր կողմից նվեր ստացավ մի շարք հրատարակություններ, որոնց մեծ մասը տպագրված են «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հովանավորությամբ:

Հիմնարար գիտական գրադարանի տնօրինությունն իր երախտագիտությունն է հայտնում Ձեզ և ակնկալում շարունակական համագործակցություն:

Հարգանքով՝ ՀՀ ԳԱԱ գիտական գրադարանի տնօրեն՝

(ստորագրություն, կլոր կնիք) Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս Տ Ա Ց Ա Կ Ա Ն

(23.10.2023)

«Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ը «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» անհատույց ստացավ հետևյալ գրականությունը՝ (բերվում է ցանկը ստացված 47 (քառասունյոթ) միավոր գիտական և գեղարվեստական գրքերի, որոնք հրատարակվել են հիմնադրամի հովանավորությամբ

«Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ (ստորագրություն, կլոր կնիք)

ԳԵՎՈՐԳ ԱՄԻՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան

12.04.2023

ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանն իր շնորհակալություն է հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» ԵՊՀ գրադարանին Խաչատուր Թահմազի «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը», Խորեն Պալյանի «Լոյս ի Լուսոյ», Ֆլորա Սարյանի «Երբ աստղերն են վայր ընկնում», Սերգեյ Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը», Բաբկեն Չուգասզյանի Երկերի ժողովածուի հատոր Ա, Ara Katibian. «The Genoside of Ottoman Greeks» գրքերի 4-ական օրինակ նվիրելու համար: Նշված գրքերը կհամալրեն գրադարանի ֆոնդը և հասանելի կլինեն օգտվողներին ընթերցասրահներում:

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ՝ (ստորագրություն, կլոր կնիք) Ե. ՄԻՐԶՈՅԱՆ

Քնարական ակնթարթ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Պարերազմ ահեղ,
Աշխարհահեղեղ…
Իմ հայ ժողովուրդ,
Քաջ հայրերիդ պես
Կռվում ես ևդու,
Սակայն չգիտես՝
Ով է թշնամիդ:
Եվ հիմա՝ դժնի
Այս տարաժամիդ՝
Սեգ ժայռերիդ մեջ,
Քարերիդ ներքո
Ըկած ես մենակ՝
Ե՛վ որդեկորույս,
Ե՛վ ուղեմոլոր…

1916

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Դեռ չի եղել հացն աշխարհում գերագույն կուռք մարդկային.
Հանուն սիրո շատ են եղել հարստություն լքողներ,
Բայց չեն եղել հանուն հացի սիրո վրա թքողներ,
Որ գեթ իրենք իրենց աչքին մեծագործներ թվային:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Միշտ քո գլխի տերն ուրիշն է եղել,
Ե՞րբ պիտի գլխիդ տրը դու դառնաս,
Մինչ հազար դարեր արյուն ես հեղե,
Որ գեթ մի ոսկե դար անկախանաս,
Ա՛զգ իմ, բայց ուղիդ այս ո՞ր ես շեղել,
Ծովի մեջ ինչպե՞ս մայր Արաքս մնաս..

***

Որպես գլխից թագն արքա մի գերու՝
Ընկել է կռվում գմբեթը վանքի,
Բայց ավերվածն էլ ՝ նորից է հլու՝
Աչքն հառել դեպի գուրթը երկնքի:
Այնինչ թե խաչից թուր ձուլեր մի սեգ,
Չէր ընկնի հայոց ոսկե թագն երբեք:

***

Հազար տարին մի անգամ,
Աստված, թող ինձ աշխարհ գամ.
Մի օր նայեմ Մասիսին՝
Գիշերն էլի հող դառնամ:

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝

ԱՎԱԳՅԱՆ Ա, բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ, բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ, պ. գ. թ., պրոֆեսոր

Համարի նյութերը , շարվածքը , լուսանկարները, ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:
Տպաքանակը՝ 99:

Թերթը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն՝
Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սենյակ:
Հեռ.՝ 060 - 710 - 617, 55 - 25 – 37,
055 – 52 - 29 – 36, 060 - 52 - 29 – 36: